

ԱՍՏՈՒԾԱՇԽՆԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ԱՒԱՐՏԻՆ

Փառք եւ գոհութիւն ամենակալ Աստուծոյ, որ անցնող տասը ամիսներու ընթացքին Աստուածաշունչի սերտողութեան աշխատանքները հասան իրենց աւարտին:

Հովանաւորութեամբ Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի եւ կազմակերպութեամբ Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի Վարիչ՝ Մաշտոց Զօպանեանի, ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդի զաւակներուն, թէ անցնող տասը ամիսներու ընթացքին տեղի ունեցան Աստուածաշունչի սերտողութիւնները հետեւեալ շրջաններուն մէջ.

1. Առաջնորդարանէն ներս, Պըրպէնք, ամէն Երկուշաբթի երեկոյեան ժամը 7:30-9:00, նիւթ՝
ա. *Սուրբ Պատարագի բացատրութիւնը*
բ. *Մեծ Պահքի ճանապարհորդութիւնը*
գ. *Եօթը նամակներ ուղղուած Եօթը Եկեղեցիներուն, քաղուած Յայտնութիւն Յովհաննու գիրքէն*

2. Կլէնտլէի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցիէն ներս, ամէն Երկուշաբթի առաւօտեան ժամը 10:00 - 11:00: Վերել յիշուած նիւթերը:

3. Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. Եկեղեցիէն ներս, ամէն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 10:00 - 11:00, միայն վերջին չորս ամիսները: Նիւթ՝ Եօթը նամակներ ուղղուած Եօթը Եկեղեցիներուն, քաղուած Յայտնութիւն Յովհաննու գիրքէն:

Ահաւասիկ այս սերտողութիւնները հասան իրենց աւարտին: Փոքրիկ դադարէ մը ետք, այս սերտողութիւնները նոյն ժամանակացոյցով եւ նոյն վայրերու մէջ պիտի շարունակուին Հոկտեմբեր 4 եւ Հոկտեմբեր 6էն սկսեալ՝ նիւթ ունենալով Աւետարանները:

Սիրով հրաւիրուած են մեր ժողովուրդի զաւակները ներկայ գտնուելու այս սերտողութիւններուն, որպէսզի այս աշխատանքներու ճամբով Աստուծոյ Լոյսը ընդմիշտ վառ մնայ մեր հոգիներէն, ու մանաւանդ մեր տուններէն ներս՝ անով լուսաւորուելու եւ լուսաւորելու մեր ամբողջ եութիւնն ու մեր շրջապատը:

Մանրամասնութեանց համար դիմել Առաջնորդարան (818) 558-7474: